

# BACCALAURÉAT TECHNOLOGIQUE

**SESSION 2015**

**ARMÉNIEN**

**VENDREDI 19 JUIN 2015**

---

**LANGUE VIVANTE 1**

Séries : **Hôtellerie, STI2D, STD2A, STL, ST2S** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient **2**

Série **STMG** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient **3**

---

**Le candidat indiquera en haut de sa copie s'il compose en arménien occidental ou en arménien oriental.**

*L'usage des dictionnaires et des calculatrices électroniques est interdit.*

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.  
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

## **Répartition des points**

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Մարտի 8ը տարբեր երկիրներու մէջ

8 Մարտ 2013

Ասպարէզ<sup>1</sup>

Լուսինէ Աւագեան

Արդէն մէկ դարէ աւելի է, որ Մարտի 8-ը կը յիշուի որպէս կիներու միջազգային օր  
ու շատ աղջիկներ եւ կիներ այս օրը կը սպասեն:

Կախներու օրը տղամարդիկ տօնած են արդէն Հին Հռոմի<sup>2</sup>մէջ: Այդ օրը Հռոմի մէջ  
ամուսնացած կիներ սիրով եւ ջերմութեամբ կը շրջապատուէին<sup>3</sup>, իրենց  
5 ամուսիններուն կողմէ նուէրներ կը ստանային: Այդ օրը նոյնիսկ ստրկուհիները<sup>4</sup>  
նուէրներ կը ստանային:

1857-ի Մարտի 8-ին Նիւ-եորք մանուածեղէնի գործարաններուն <sup>5</sup> մէջ  
աշխատողները առաջին անգամ երթի<sup>6</sup> միջոցով բողոքեցին<sup>7</sup> ցած աշխատավարձի<sup>8</sup>  
եւ աղքատ աշխատանքային պայմաններու մէջ աշխատելու դէմ: 1908-ին արդէն  
10 անոնց թոռները ոտքի ելան երեխաներու աշխատանքի արգելման,  
գործարաններու մէջ աշխատավարձի բարձրացման եւ, ընդհանրապէս, կիներու  
իրաւունքներու համար:

1910-ին Գոփէնհակն կիներու միջազգային խորհրդածոյովին Քլարա Յեդքին  
կ'առաջարկէ Մարտի 8-ը ընդունիլ կիներու միջազգային տօն, ի պատիւ<sup>9</sup>  
15 անցեալին Նիւ-Եորք տեղի ունեցած իրադարձութիւններուն: Առաջին անգամ  
կիներու միջազգային տօնը կատարած են 1911-ին՝ Գերմանիա, Աւստրիա, Դանիա  
եւ Զուիցերիա:

Ռուսաստան այս օրը առաջին անգամ տօնած են 1913-ին, եւ մինչեւ այսօր մեծ  
շուքով կը դիմաւորեն: Այստեղ Մարտի 8-ին տղամարդիկ կը նուիրեն գեղեցիկ  
20 ծաղկեփունջեր եւ անուշահոտ:

<sup>1</sup> Ասպարէզ – Asparez, journal en ligne du cercle des journalistes « Asparez »

<sup>2</sup> Հռոմ - Rome

<sup>3</sup> շրջապատուիլ – être entouré

<sup>4</sup> ստրկուհի – esclave (femme)

<sup>5</sup> մանուածեղէնի գործարան – fabrique textile

<sup>6</sup> երթ - marche

<sup>7</sup> բողոքել – se plaindre, contester

<sup>8</sup> աշխատավարձ - salaire

<sup>9</sup> ի պատիւ – en l'honneur de

Ֆրանսա Մարտի 8-ին կը կազմակերպուին ժողովներ, ցոյցեր<sup>10</sup>, երթեր՝ ի պաշտպանութիւն կիներու իրաւունքներուն:

Գերմանիա այս օրը կիներու իրաւունքներու իրաւապաշտպանները<sup>11</sup> կը կազմակերպեն տարբեր ձեռնարկներ:

25 Մարտի 8-ը Չինաստան բոլոր կիներուն համար ոչ աշխատանքային օր է: Այս օրը կիները կը մասնակցին Միս Փէքինկ մրցոյթին եւ բոլորին կը փորձեն ապացուցել, որ իրենք աշխարհի ամենագեղեցիկ կիներն են:

30 Հայաստան Մարտի 8-ը կը համարուի կիներու, գեղեցկութեան եւ մայրութեան միջազգային օր, սակայն մեր երկիրը տօն է ոչ միայն այս օրը, այլեւ, ի ուրախութիւն հայ կիներուն՝ Մարտի 8-էն սկսեալ մինչեւ Ապրիլի 7-ը կը համարուի կիներու ամիս: Այս օրը հայ տղամարդիկ իրենց կիներուն, մայրերուն, քոյրերուն կը նուիրեն տարբեր բաներ, ծաղիկ, անուշահոտ եւ այլն: Մարտի 8-ը Հայաստան ոչ աշխատանքային օր է:

---

<sup>10</sup> ցոյց – manifestation

<sup>11</sup> իրաւապաշտպան – défenseur de droit

## TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

### I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT (10 points)

1. Ո՞ր երկիրը առաջին անգամ տօնած են կիներու օրը:
2. Ո՞ր թուականին Նիւ Եորքի մանուածեղէնի գործարանի աշխատողները առաջին անգամ բողոքեցին աղքատ աշխատանքային պայմաններու դէմ:
3. Ո՞ր երկիրներուն մէջ առաջին անգամ տօնուած է Մարտի 8ը՝ կիներու միջազգային օրը:
4. Տղամարդիկ կիներուն Ռուսաստան ի՞նչ կը նուիրեն:
5. Հայաստան Մարտի 8ը աշխատանքային օր է:
6. Հայաստան տօնը ինչո՞ւ կիներու ամիս կը նկատեն:

### II. EXPRESSION ÉCRITE (10 points)

Traitez UN des deux sujets. (180 mots minimum)

1. Կիներու օրը նոյնիսկ Հին Հռոմի մէջ տօնուած է: Ի՞նչպէս կը բացատրէք այդ օրը տօնելու կարեւորութիւնը:
2. Ներկայացուցէք կիներու եւ տղամարդոց այսօրուան աշխատանքային պայմանները:

## Մարտի 8ը տարբեր երկրներում

8ը մարտի 2013

Ասպարեզ<sup>1</sup>

Լուսինե Ավագյան

Արդեն մեկ դարից ավել է, ինչ մարտի 8-ը նշվում է որպես կանանց միջազգային օր, ու շատ աղջիկներ եւ կանայք այս օրվան են սպասում:

Կանանց օրը տղամարդիկ նշել են դեռ Հին Հռոմում<sup>2</sup>: Այդ օրը Հռոմում ամուսնացած կանայք սիրով եւ ջերմությամբ էին շրջապատվում<sup>3</sup>, իրենց ամուսիններից նվերներ ստանում: Այդ օրը նույնիսկ ստրուկուհիներն<sup>4</sup> էին նվերներ ստանում:

1857 թվականի մարտի 8-ին Նյու-Յորքում տեքստիլ ֆաբրիկաներում<sup>5</sup> աշխատողները առաջին անգամ երթի<sup>6</sup> միջոցով բողոքեցին<sup>7</sup> ցածր աշխատավարձի<sup>8</sup> եւ աղքատ աշխատանքային պայմաններում աշխատելու դեմ: 1908 թ. արդեն նրանց թոռները ոտքի կանգնեցին երեխաների աշխատանքի արգելման, ֆաբրիկաներում աշխատավարձի բարձրացման եւ, ընդհանրապես, կանանց իրավունքների համար:

1910 թ.-ին Կոպենհագենում կանանց միջազգային խորհրդածոլովին Կլարա Յեռկինը առաջարկում է մարտի 8-ը ընդունել կանանց միջազգային տոն, ի պատիվ<sup>9</sup> անցյալում Նյու-Յորքում տեղի ունեցած իրադարձությունների: Առաջին անգամ կանանց միջազգային տոնը նշել են 1911 թ.-ին՝ Գերմանիայում, Ավստրիայում, Դանիայում եւ Շվեյցարիայում:

Ռուսաստանում այս օրը առաջին անգամ նշել են 1913 թ.-ին, եւ մինչ օրս մեծ շուքով են դիմավորում այդ օրը: Այստեղ մարտի 8-ին տղամարդիկ նվիրում են գեղեցիկ ծաղկեփնջեր եւ օձանելիք:

<sup>1</sup> Ասպարեզ – Asparez, journal en ligne du cercle des journalistes « Asparez »

<sup>2</sup> Հռոմ - Rome

<sup>3</sup> Շրջապատվել – être entouré

<sup>4</sup> Ստրուկուհի – esclave (femme)

<sup>5</sup> Տեքստիլ ֆաբրիկա – fabrique textile

<sup>6</sup> Երթ – marche

<sup>7</sup> Բողոքել – se plaindre, contester

<sup>8</sup> Աշխատավարձ - salaire

<sup>9</sup> Ի պատիվ – en l'honneur de

20 Ֆրանսիայում մարտի 8-ին կազմակերպվում են ժողովներ, ցույցեր<sup>10</sup>, երթեր՝ ի պաշտպանություն կանանց իրավունքների:

Գերմանիայում այս օրը կանանց իրավունքների իրավապաշտպանները<sup>11</sup> կազմակերպում են տարբեր միջոցառումներ:

25 Մարտի 8-ը Չինաստանում բոլոր կանաց համար ոչ աշխատանքային օր է: Այս օրը կանայք մասնակցում են Միս Պեկին մրցույթին եւ բոլորին փորձում ապացուցել, որ իրենք աշխարհի ամենագեղեցիկ կանայք են:

30 Հայաստանում մարտի 8-ը համարվում է կանանց, գեղեցկության եւ մայրության միջազգային օր, սակայն մեր երկրում տոն է ոչ միայն այս օրը, այլեւ, ի ուրախություն հայ կանանց՝ մարտի 8-ից սկսած մինչ ապրիլի 7-ը համարվում է կանանց միամսյակ: Այս օրը հայ տղամարդիկ իրենց կանանց, մայրերին, քույրերին նվիրում են տարբեր նվերներ, ծաղիկներ, օձանելիք եւ այլն: Մարտի 8-ը Հայաստանում ոչ աշխատանքային օր է:

---

<sup>10</sup> Ցույց – manifestation

<sup>11</sup> Իրավապաշտպան – défenseur de droit

## TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

### I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT (10 points)

1. Ո՞ր երկրում են առաջին անգամ նշել կանանց տոնը:
2. Ո՞ր թվականին Նյու Յորքի տեքստիլ ֆաբրիկայի աշխատողները առաջին անգամ բողոքեցին աղքատ աշխատանքային պայմանների դեմ:
3. Ո՞ր երկրներում է առաջին անգամ նշվել մարտի 8ը՝ կանանց միջազգային օրը:
4. Ի՞նչ են տղամարդիկ նվիրում կանանց Ռուսաստանում:
5. Հայաստանում մարտի 8ը աշխատանքային օր է:
6. Ինչու՞ են Հայաստանում տոնը համարում կանանց միամսյակ:

### II. EXPRESSION ÉCRITE (10 points)

Traitez UN des deux sujets. (180 mots minimum)

1. Կանանց օրը նշվել է նույնիսկ Հին Հռոմում: Ձեր կարծիքով ինչու՞ է կարևոր նշել կանանց տոնը:
2. 1857թ-ին կանայք բողոքում էին աղքատ աշխատանքային պայմանների դեմ: Ձեր կարծիքով այսօր կանայք եւ տղամարդիկ հավասար պայմաններ ունե՞ն: